դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես 30,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, բայց գրավոր միջնորդության տեսքով դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացրել, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Գրիգորյան Ճին» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՀՄԱՃԶԲ-22-10/33-1» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2022թ. դեկտեմբերի 26-ին կնքված թիվ «ՀՄԱՃԶԲ-22-10/33-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2024թ. նոյեմբերի 18-ի միակողմանի մասնակի լուծումը:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am